27 դեկտեմբերի 2017 թ. N 346-Ա

ք. Ստեփանակերտ

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. 2017 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած խաղողագործներին (այսուհետ՝ խաղողագործներ) կարկտահարված յուրաքանչյուր 1 հեկտարի դիմաց միանվագ տրամադրել 150 000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով պետական աջակցություն:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 2 խմբի 1 դասի «12 Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծախսային ծրագրի «Պատերազմական գործողություններից և կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին աջակցություն» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու և խաղողագործներին բաշխելու նպատակով, 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով գումար հատկացնել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմին և 36 031 500 (երեսունվեց միլիոն երեսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով գումար հատկացնել Արցախի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Քաշաթաղի շրջանների մի շարք համայնքներին՝ համաձայն հավելվածի:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 27–ի N 346-Ա որոշման

ՑԱՆԿ
2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Հ/հ	***Շրջանը***	***Կարկտահարված տարածքը (հա)***	***Տրամադրվող գումարը (ՀՀ դրամ)***
		ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ	
1	Ավետարանոց	5,6	840 000
2	Խնապատ	2,75	412 500
3	Խրամորթ	46,9	7 035 000
4	Սառնաղբյուր	0,5	75 000
5	Սարուշեն	1	150 000
6	Ուղտասար	11,8	1 770 000
Ընդամենը Ասկերանի շրջանում		***68,55***	***10282500***
		ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ	
1	Ազոխ	1,3	195 000
2	Առաքել	6	900 000
3	Բանաձոր	18,5	2 775 000
4	Մեծ Թաղեր	7	1 050 000
Ընդամենը Հադրութի շրջանում		***32,8***	***4 920 000***
		ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ	
1	Բերդաշեն	1,7	255 000
2	Նորշեն	3,7	555 000
3	Հերհեր	12	1 800 000
4	Կ.Շուկա	4,6	690 000
5	Մաճկալաշեն	21,77	3 265 500
6	Սոս	81,19	12 178 500
7	Ջիվանի	1	150 000
8	Սարգսաշեն	9	1 350 000
9	Քերթ	1	150 000
10	Խնուշինակ	1,9	285 000
11	ՊՊՖ	4	600 000
Ընդամենը Մարտունու շրջանում		***141,86***	***21 279 000***
		ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ	
1	Ծաղկաբերդ	1	150 000
Ընդամենը Քաշաթաղի շրջանում		***1***	***150 000***
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ ԱՀ-ում		***244,21***	***36 631 500***

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ